ԹԻՎԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՅԿԱՁՈՒՆ ԱԼՎԱՐՑՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
ԵԳՊԱ դոցենտ

Հոգեւոր տաղերգության խորհրդական խոսքի կառուցման մեջ եւ, ընդհանրապես, միջնադարյան գեղարվեստական մտածողության համակարգում թվով արտահայտված խորհրդանշանը, թերեւս, ամենաբարդն ու դժվարընկալելին է: Դրանով պետք է բացատրել այն, որ թե՛ մեկնիչները, թե՛ բանաստեղծներն այս հանգամանքի վրա ավելի շատ են ուշադրություն հրավիրել:

Հին աշխարհում եւ միջնադարում իմաստասերները, աստվածաբաններն ու մեկնիչները համոզված էին, որ Աստծո արարչագործության ներդաշնակության ու կատարելության հիմքում թիվն է, չափ ու կշիռը: Սողոմոնի «Իմաստության» մեջ կարդում ենք. «*Այլ զամենայն չափով եւ թուով եւ կշռով կարգեցեր, զի մեծաւէս կարօղ լինել յամենայն ժամ առ քեզ է. եւ զօրութեան բազկի քոյ ո՞վ է որ ընդդէմ դառնայցէ*»[1]:

«Իմաստության» հայ մեկնիչը՝ Ներսես Լամբրոնացին, այն կարծիքին է, որ այդ չափ ու կշիռը թեեւ մեզ հասանելի չէ, բայց դրանով է ամեն բան կարգավորվում եւ ուղղվում. «*Չափ եւ կշիռ կամաց Աստծոյ տեսչութեանն մեզ անհասանելի է, սակայն յարդար կամաց նորա ամենեւին բարեկարգ ուղղի*»[2]: Գրիգոր Նարեկացուն նվիրված արժեքավոր աշխատության մեջ Պ. Խաչատրյանը մեծ բանաստեղծի գործածած թվերի խորհրդավորության (միստիկայի) մասին գրում է. «*Նարեկացու գեղարվեստական մտածողության համակարգում խորհրդանշային ամենացայտուն տարրը թերեւս թվերն են՝ նրանց տրված այլաբանական իմաստներով ու խորհրդավոր կիրառմամբ: Միջնադարը թվերին նայում է որոշես կյանքի եւ բնության օրինաչափությունների վերացարկումների, հետեւաբար եւ՝ բազմանշանակ ընդհանրացումների, որոնց հիմքում ընկած են մարդու կազմությանն ու բնախոսությանը, կենցաղային ոլորտին ու աշխատանքային գործունեությանը, շրջապատող բնությանն ու իմացության տարբեր բնագավառներին վերաբերող դիտումներ, եզրահանգումներ*»[3]:

[1] Իմաստութիւն Սողոմոնի, ԺԱ, 22:

[2] Ներսես Լամբրոնացի, Մեկնություն Սողոմոնի իմաստության, Երեւանի համալսարանի հրատ., Եր., 2004, էջ 182:

[3] Պողոս Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 346:

Թվով արտահայտված այլաբանությունն ամենատարածված միջոցներից էր: Դրա հիմնական պատճառն այն է, որ թիվն ունի քիչ միջոցներով շատ բան ասելու հնարավորություն, եւ, որ ավելի կարեւոր է, միջնադարի ուսյալ մարդու համար դրա «ծածկագիրը» մեծ գաղտնիք չէր: Պ. Խաչատրյանը ճիշտ է նկատել, որ «Դրանք (իմա՛ թվերը) միջնադարյան մտավորական մարդու համար որքան բնական ու հասկանալի, նույնքան էլ նոր ժամանակների մտածողությանը թվում են խորթ ու սխոլաստիկ: Սակայն մանավանդ այդ բնագավառում է, որ մեկնիչներն օգնում են ի հայտ բերելու Նարեկացու երկի որոշ թաքուն շերտեր»[4]:

Թվերի խորհուրդների մասին ուշագրավ են խորանների մեկնիչների տեսակետները: Ստեփանոս Սյունեցու մեկնության մեջ կարդում ենք. «Իսկ եղջիւրք կամարացն անդրէն ի վերայ խոյակացն զոյգ առ միմեանս կարմիր եւ կաղոյտ խարսխեալ հինգ հինգ մասամբք մերձ ընդ մերձ զհինգ դատողական եւ զհինգ տախտակաց աւրինացն նշանակէ»[5]: Այսինքն՝ խոյակների երկու հինգական մասերն առանձնաբար («հինգ հինգ մասամբք»), որպես թիվ, խորհրդանշում են երկու հոգեւոր հասկացություններ՝ հինգ դատողական եւ Օրենքի հինգ տախտակները:

Իններորդ խորանի խորհրդականության մասին Ներսես Շնորհալին գրում է. «Եւ այսպէս իններորդ խորանս խորհրդական, որ է երիցս երեք նշանակէ մեզ զերիս աւետարանիչս համաբարբառս զՄաթէոս, զՄարկոս, զՂուկաս…»[6]: Ինը երրորդված երեքն է, որ խորհրդանշում է երեք համաբարբառ ավետարանիչներին, իսկ երեքի խորհուրդն ակհայտ է. երրորդ խորանի կամարները երեք են, «քանզի անձնաւորութիւն Երրորդութեան գիտելի էր նոցա, ուսեալք ի սերովբէիցն յերեքսրբեանն, զոր եւ մարգարէիցն ուսուցանէին»[7]:

Թվերի խորհուրդների մեկնություններով հատկապես աչքի է ընկնում Գրիգոր Տաթեւացին. «Ի ցանգն Աւետարանին տեսութիւն…» մեկնության մեջ հանգամանորեն անդրադառնալով բոլոր խորանների խորհուրդներին՝ հատկապես կենտրոնանում է թվերի խորհրդաբանության վրա: Այս տեսակետից խիստ ուշագրավ է հետեւյալ մեկնությունը. «Դարձեալ շրջէ զկարգն, զի Դ-ն մերձ է առ մեզ, եւ երրեակն՝ զկնի նորա եւ որ ի կարգին է, միակն ցուցանէ զբնական աւրէնքին, որ տուաւ նախնեացն. եւ երկեակն՝ զբանական աւրէնս, որ երկրորդեցաւ զկնի առաջնոյն, երրեակն՝ զգրաւորն, որ երրորդեցաւ զկնի երկրորդին, չորրորդն, յորս Դ-ն, զնորս եւ զԱւետարանս, որ չորրորդեցաւ զկնի երրորդին:

[4] Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 352:

[5] Մեկնութիւնք խորանաց, Հետազոտություն եւ բնագրեր, Աշխատասիրությամբ՝ Վ. Հ. Ղազարյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 2004, էջ 259:

[6] Նույն տեղում, էջ 287-288:

[7] Նույն տեղում, էջ 277:

Եւ զի Գ երրեակն, որ է Թ, նշանակ գրաւորականին անկատար եւ անկատարիցն տուեալ: Իսկ նորս Դ-ն, որ ծնանի զԺ՝ կատարեալ եւ կատարելոցն տուեալ: Դարձեալ առաջին Դ-ն նշանակէ զՄաթէոս հանդերձ երիւքն, երրեակն՝ զՄարկոս հանդերձ երկոքումքն, երկեակն՝ զՂուկաս՝ հանդերձ միւսովն, միայնակն՝ զՅովհաննէս առանձինն եւ ոչ ոք զկնի նորայ»[8]:

Նա մեզ մոտիկ (մերձ) է համարում չորս թիվը, որին հետեւում են երեքը, երկուսը եւ մեկը: Այստեղ ուշագրավ է այն, որ չորս թիվը, որ խորհրդանշում է չորս Ավետարանները, համարվում է կատարյալ՝ տրված կատարյալներին, քանզի նրանից առաջանում է տասը թիվը (չորսը միակ թիվն է, որի մեջ կա եւ մեկ թիվը, եւ երկու թիվը, եւ երեք թիվը, եւ չորս թիվը, որոնց գումարը տալիս է տասը թիվը): Մեջբերված հատվածն ուշագրավ է նաեւ այն տեսակետից, որ արծարծվող խնդրի համար Տաթեւացին առաջարկում է ոչ պակաս հետաքրքիր մեկ այլ մեկնություն՝ «Եւ այլ եւս տեսութիւն»[9]:

«Երգ երգոցի» մեկ տողի («Սրտակա՛թ արարեր զմեզ քոյր մեր հարսն. սրտակա՛թ արարեր զմեզմ միով ակամբ քով, եւ միով քառամանեկաւ պարանոցի քոյ»[10]) մեկնության մեջ Գրիգոր Տաթեւացին չորս թվի կատարելության մասին հավելյալ տեղեկություններ է հաղորդում. «Մանյակն ըստ մարմնի այն է, որ հարսը ոսկի շարոց է դնում դեմքի կամ պարանոցի վրա: Եւ չորս, որովհետեւ չորս նյութից է՝ ոսկի, արծաթ, ակներ եւ մարգարիտ: Իսկ եկեղեցու մանյակը Ավետարանի քաղցր լուծն է, եւ չորսը՝ հավատը, հույսը, սերը եւ մարմնի սրբությունը կամ աղաշխարությունն է, որ ընդունեց Զակքեոսը. «Կիսատուցեմ քառապատիկ» (հմմտ. Ղուկ., ԺԹ, 1-8), այսինքն՝ քառանյութ մարմնովս կապաշխարեմ: Եւ դարձյալ մի մեղքի համար չորսն է աղաշխարանքը, այսինքն՝ զղջում, խոստովանություն եւ մարմնի աղաշխարություն եւ ողորմություն»[11]:

Թվերի խորհուրդների մեկնությամբ եւ հատկապես դրանցով ստեղծված այլաբանություններով անմրցելի է Գրիգոր Նարեկացին. նա հույժ կարեւոր է համարում թվերի խորհուրդները. «Ի համարս թուոց տասնն է կատարեալ, եւ եթէ այլ թուէ, ի մին դառնայ, ասել՝ մետասան. եւ որ ի կարգին է. նա եւ աստուա-

[8] Նույն տեղում, էջ 339-340:

[9] «Եւ այլ եւս տեսութիւն: Զի Դ եւ Թ լինի ԺԳ, եւ վերջին միակ Ժ ի վերա՝ ԺԴ եւ Ժ եւս, որ են յորս երկուքն, լինի ԻԴ՝ նշանակ ԻԴ գլխաւոր արարածոց եւ ԻԴ մարգարէիցն, եւ ԻԴ այբուբենից եբրայեցոցն եւ այլն: Դարձյալ Դ եւ Թ եւ Ժ, յորս երկուքն, եւ վերջին Ժ՝ լինի ԼԳ, ցուցանէ զԼԳ ամք Կենարարին, որ ի վերայ երկրի եւ ԼԳ ժամ քարոզութեան ի դժոխս: Իսկ Ը ի Մաթէոս եւ Զ ի Մարկոս եւ է Ղուկաս եւ Զ Յովհաննէս լինի Իէ, ցուցանէ զԻէ խորանս ցանգի խորանացն, որ ասէ յորս չորսն եւ Գ-ն եւ այլն զկնի»: Մեկնութիւնք խորանաց, Հետազոտություն եւ բնագրեր, Աշխատասիրությամբ՝ Վ. Հ. Ղազարյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 2004, էջ 340:

[10] Երգ երգոց, Դ, 9:

[11] Գրիգոր Տաթեւացի, Երգ երգոցի մեկնությունը, Անկյունաքար, Եր., 2005, էջ 57:

ծաբան վկայէ այսմ: Արդ որոյէս ի միակսն, նոյնոյէս եւ ի տասնեակսն տասն տասն հարիւր է. եւ հինգ տասն յիսուն. Հարիւր կատարեալ թիւ է որոյէս զտասն, եւ յիսուն կէս թիւ որոյէս զհինգն: Արդ զկէս աչս ունի մարդ, եւ ոչ կատարեալ: Այսինքն յրսնաւորք: Արդ զիա՞դ կարէ տեսանել զծածկեալն ի տեսլենէ, այսինքն յրսնաւորէս: Նաեւ ի հարիւրաւորացն, այսինքն ի հրեշտակաց անտեսանելի է. թէոէտ եւ ոչ որոյէս մեզ, այլ եւ ոչ կատարեալ»[12]: Այստեղ էական է նաեւ Նարեկացու այն միտքը, որ մարդը (հիսնավորը) կատարյալ չէ եւ չի կարող տեսնել իրենից ծածկվածը[13], երբ անգամ հարյուրավորների՝ հրեշտակների (կատարյալների) համար է այն անտեսանելի, թեեւ՝ ոչ մեզ պես: Գրիգոր Նարեկացին առանց երկիմաստության ասում է, որ հարյուր թիվը կատարալ է ճիշտ այնպես, ինչպես մեկը՝ միավորների, տասը՝ տասնավորների մեջ:

Խորանների մեկնության մեջ տասը թվի կատարելության մասին Գրիգոր վարդապետ Խլաթեցին (Ծերենցի) տալիս է կարեւոր բացատրություն. «Իսկ խորհրդով տեսեալ զտասն, զի թիւ է սրբազոյն եւ նըւէր Աստուծոյ, եւ ըստ տասնաբանեան աւրինացն եւ ըստ փեղկից խորանին եւ ըստ Ժ մասանց արարածոց, եւ որքէ ի մեզ են զգայարանք մարմնոյ եւ զաւրութիւնք Հոգւոյ»[14]:

Հարյուր թվի կատարյալ լինելու ակունքները Աստվածաշնչում են: Հիսուս Քրիստոս երկրի վրա աղրեց երեսուներեք տարի եւ չորս ամիս: Արդեն նշվեց, որ մարդկության հոգեւոր զարգացման երեք շրջաններից յուրաքանչյուրը, ըստ Աստվածաշնչի, բաղկացած է երկու հազար տարուց (Աստծո արարչագործության վեց օրերը): Այն, որ Հիսուս Քրիստոս չէր եկել միայն վերջին՝ սիրո (Ավետարանի) շրջանի համար, վկայում է ինքը. հրեաները մեղադրում են Հիսուսին ստախոսության մեջ. «Ասեն ցնա Հրեայքն. յիսուն ամ չեւ եւս է քո, եւ զԱբրահա՞մ տեսեր: Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ. յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես»[15]: Այսինքն՝ Աբրահամից՝ Հին ուխտից առաջ՝ եւ բոլոր ժամանակներում է ինքը: Ուրեմն՝ նրա երկրային կյանքի տարիները պետք է երրորդել, եւ կստացվի ուղիղ հարյուր տարի. այսինքն՝ Աստծո ամենակալ ու անվախճան թագավորությունը, որը կատարյալ է, բայց մարդկանց՝ հիսնավորների համար՝ անհասկանալի: Ուշագրավ է, որ հրեաները Քրիստոսի տարիքը սահմանելիս գործածում են հիսուն թիվը, այսինքն՝ նրա մեջ տեսնում են միայն մարդուն (հիսնավորին) եւ ոչ թե Աստծուն (հարյուրավորին՝ կատարյալը):

[12] Գր. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 279:

[13] Ներսես Լամբրոնացու վերոնշյալն տեսակետը՝ «Չափ եւ կշիռ կամաց Աստծոյ տեսչութեանն մեզ անհասանելի է» թերեւս բխում է այստեղից:

[14] Մեկնութիւնք խորանաց, Հետազոտություն եւ բնագրեր, Աշխատասիրությամբ՝ Վ. Հ. Ղազարյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 2004, էջ 309:

[15] Աւետարան ըստ Յովհաննու, Ը, 57-58:

Հարյուր թիվը նաեւ այլ խորհուրդի նշանակ է. Աբրահամի հետ ուխտ կնքելիս Աստված նրան խոստանում է զավակ, ով ծնվում է այն ժամանակ, երբ լրանում է Աբրահամի հարյուր տարին («Եւ Աբրահամ հարիւրամեան էր յորժամ եղեւ նմա Իսահակ որդի իւր»[16]): Հին Կտակարանում Հիսուս Քրիստոսի զոհաբերությունն ու հարությունը ներկայացնող տիպարը Իսահակն է (թարգմանվում է խնդություն[17]). Աստված Աբրահամի հավատն ստուգելու համար պատվիրում է զոհաբերել Իսահակին եւ միայն վերջին պահին է կասեցնում նրան՝ մատնացույց անելով զոհաբերության գառը (Գառն Աստծո), որը նույնպես Հիսուս Քրիստոսին էր խորհրդանշում: Այլ կերպ՝ Աստծո հավատավոր ժողովուրդների նախահայրը՝ հայր Աբրահամը (թարգմանվում է հայր բազմաց), հարյուր տարեկանում ունեցավ Իսահակին, այսինքն՝ Աստծո սահմանած տարիքում, որը կատարյալ է:

Գրիգոր Նարեկացին «Մատյանում» կատարյալ է համարում նաեւ յոթ թիվը. «Որ զանբաւութիւնս թուոց պարագրէ» Մատյան, ՀԹ, 56), աստվածային հարակայության, անհետազոտելի սահմանի, անհատ հորդության արժեք եւ համարում դժվար բացատրելի («Դժուարթարգմանելի մերոց իմաստից» - ԼԱ, 33), քանի որ յոթի այբբենական նշանը (Է) հայ միջնադարում նույնացվում է աստվածության հետ, եւ Աստծո հատկանիշներով էր բնութագրվում նաեւ այդ թիվը»[18]:

Պատկերացում կազմելու համար, թե թվերով արտահայտված այլաբանություններն ինչ բարդ համակարգ են ներկայացնում, բերենք մեկ օրինակ:

Քանզի իննուց յիսնից եւ թուոց երից եւ չորեակ տասնից,
Ի վաղորդայնէ տուընջեանն առ մուտս արեւուն,
Անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ
Իսկ եւ իսկ ի սոյն անարգել սրտիւ
Ի վեր է, քան զաղերսանաց ակնկալութիւն մարդկային՝
Բարեգործել միմեանց շնորհատրութիւն… (տ. 29-34):

«Մատեանի» քսանիններորդ գլխի այս տողերի խորհուրդի մեկնությանը միջնադարից մինչեւ մեր օրերն անդրադարձել են շատ մեկնիչներ ու բանասերներ: Հատկապես հետաքրքիր է Ստ. Մալխասյանի մեկնությունը. «Ինձ թվում է,

[16] Գիրք ծննդոց, ԻԱ, 5:

[17] Համաբարբառ Աստուածաշունչ մատեանի, Աշխատասիրեց Վեր. Վահագն Գ. Սահակեան, Տպարան Ատլաս, Պէյրութ, 1963, էջ 1173:

[18] Պողոս Խաչատրյան, նշվ. աշխ, էջ 351:

թե այս առեղծվածը լուծվում է ավելի բնական եւ իմաստին համապատասխան կերպով, տրված բոլոր թվանշաններն էլ նկատի առնելով, այսպես. Ինն յիսուն = 450 + թիւք երեք = 3 + չորեակ տասունք = 40, ընդամենը 493: Այս գումարը (493) վերածվում է հետեւյալ թվերին – 400, 70, 20, 3, որոնք նպատակահարմար շարքով դասավորելով եւ տառերով արտահայտելով՝ կստանանք.

70 = Ղ 400 = Ե
= «հինգ» բառը:
20 = Ի 3 = Գ

Առեղծվածը այսպես լուծվելուց հետո հասկանալի կդառնա ամբողջ խոսքի իմաստը»[19], այսինքն՝ ինչո՞ւ հինգ. բացատրությունը շատ պարզ է. հինգ թիվը ցույց է տալիս Հայոց եկեղեցում սահմանված աղոթքի ժամերը՝ Առաւօտու, Արեւագալի, Երրորդ, Վեցերորդ եւ Իններորդ[20]:

Համառոտ այս ակնարկն իսկ բավական է պատկերացում կազմելու համար թվով արտահայտված հոգեւոր խորհրդանշանի մասին, որը միջնադարի գեղարվեստական մտածողության համակարգում բացառիկ կարեւորություն ունի՝ որպես այլաբանական խոսքի ատաղձ: Սրա անտեսումն անխուսափելիորեն հանգեցնում է խորհրդական խոսքի բնույթի անտեսմանը՝ դրանով դուռ բացելով այդ խոսքի բուն բովանդակության պարզունակ ընկալման համար:

[19] Հուշարձան ժողովածու, Վիեննա, 1911, էջ 223-224:

[20] Տե՛ս Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 350: